ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. օգոստոսի 5 -ին, N 286 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐԻ Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի 1-ին մասով, 164-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Ա. Ասատրյանի 2025 թվականի օգոստոսի 4-ի դիմումը՝ ***որոշում եմ***.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Կաթնաղբյուրի Մ. Գալշոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Արթուր Ասատրյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ 2025 թվականի օգոստոսի 5-ից սեպտեմբերի 8-ը ներառյալ:

2. Արթուր Ասատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Կաթնաղբյուրի Մ. Գալշոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Կաթնաղբյուրի Մ. Գալշոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Արայիկ Ներսիսյանի վրա:

3. Արթուր Ասատրյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի սեպտեմբերի 9-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 8/6/2025 14:56:17 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ